

Պօղոս եւ Կարապետ Չէլէպիներուն ինամակա-
լութեան տակ արքունի սեղանաւոր անուանեցան
եւ Էփեֆն առին (1847 ին):

Մեր դիւցազնը փողերանոցի պաշտաման
հետ երկրորդական պաշտօններ ալ կը վարէր:
Հազիւ թէ իւր վերոյիշեալ հիւանդութենէն ա-
պաքինեցաւ, հասարակաց օգտին եւ երկրագոր-
ծութեան խորհրդարանին անգամ անուանեցաւ,
եւ իւր խորատես սրամտութեամբը շատ անգամ
խորհրդակցաց զարմանքը կը շարժէր:

Յամին 1843 Հոկտ. 6 ին Յակոբ Չէլէպի
սկսաւ փողերանոցի զարգացման համար ամէն
ջանք ընել: Տէրութիւնն փողերանոցին մէջ շո-
գեշարժ մեքենաներ մտցընել ուղեց, որպէս զի
թէ դրամահատութիւնը դիւրանայ եւ թէ ան-
ձանց ինայութիւն ըլլայ: Արձն յանձնելու էր
այս գործը. Յակոբ հոն էր. հարկաւ Յակոբայ,
որ նախ եւ յառաջ Լոնտոն քանի մը հոգի զրկեց,
որպէս զի մեքենականութեան այս մասն ուսում-
նասիրեն: Այս միջոցին, այսինքն 1844 Յունուար
10 ին, ոսկի փէրէյներն ելան:

Տիւղեան Յակոբայ անուան կոթող կը մնայ
նաեւ իւր ի Զմիւռնիա կանգնած թղթի մեծ
գործարանն¹:

Այսպիսի գործունէութեան մէջ էր Յա-
կոբ Չէլէպի, երբ Սուլթան Ապտիւլ Մէճիտ
տէրութեան եւրոպական կողմերը ճանապարհոր-

¹ Յամին 1847 ի Վիեննա լոյս տեսնող Էրպուս ազ-
գային լրագիրն իւր յորդորանօրն ու ձեռնտութեամբը
հրատարակուած է: Հմմտ. Հանդէս Այսօրեայ, 1888, թ. 12: